ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 7 - ԱՄՅԱ

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ր Ծ Ր Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2016

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը հիմնադրվել է Սոցներդրումների հիմնադրամի վերակազմավորման հիմքի վրա՝ «2014-2025թթ. Հայաստանի հեռանկարային զարգացման ծրագրի» տարածաշրջանային զարգացման քաղաքականության շրջանակներում:

Հիմնադրամը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարի 2000 թվականի սեպտեմբերի 13-ի N 988 հրամանով և վերանվանվել է ՀՀ կառավարության 2015 թվականի 25 դեկտեմբերի N 1521 որոշմամբ:

Սոցներդրումների հիմնադրամը 1996թ. ի վեր հսկայական գործունեություն է ծավալել համայնքային ենթակառուցվածքների վերականգնման գործում և իրականացրել է 908 ծրագիր: Երկրի բոլոր մարզերում հիմնադրամն ունի իր արգասաբեր գործունեության բազում վկայություններ՝ նորակառույց և վերակառուցված դպրոցներ, համայնքային կենտրոններ, խմելու և ոռոգման ջրագծեր, առողջապահական կենտրոններ և այլն, հատկապես աղետի գոտում և սահմանամերձ շրջաններում:

Կազմակերպության գրանցման վկայականի համարն է **N 03Ա1017420**:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի նպատակներն են.

1. Բնակչության նյութական և ոչ նյութական բարեկեցության աճին նպաստելը՝ սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների ու հանրային ծառայությունների որակի և հասանելիության բարձրացման, զբաղվածության և տնտեսական ու ներդրումային ակտիվության խթանման միջոցով,

2. Տարածքների ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների հզորացմանն օժանդակելը,

3. Տարածքներում սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների և մատուցվող համայնքային ու հանրային ծառայությունների որակը, հասանելիությունն ու արդյունավետությունը բարելավելը և զարգացնելը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի խնդիրներն են.

1. Տեղական ինքնակառավարման մարմիններին, տեղական հասարակական և այլ ոչ պետական կազմակերպություններին օժանդակելը հիմնադրամի գործունեությանը վերաբերող ծրագրերի նախապատրաստման ու իրականացման գործում,

2. Անհրաժեշտության դեպքում իր գործունեության մասին տեղեկությունների տրամադրումը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ու հասարակական կազմակերպություններին,

3. Ներկայացվող ծրագրերի փորձաքննումը և հաստատումը, դրանց իրականացման աշխատանքների ֆինանսավորումը, կապալառուների և խորհրդատուների ընտրության նպատակով անցկացվող մրցույթների ու շինարարական աշխատանքների ընթացքի վերահսկումը համապատասխան ֆինանսավորող կողմերի հետ համաձայնեցված կարգով, և այլն:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են՝ 98 (իննսունութ) աշխատակից:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտները

Ներկայումս Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն իրականացնում է հետևյալ ծրագրերը.

1. Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման Ծրագիրը,
2. Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման Ծրագիրը,
3. Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման Ծրագիրը,
4. ԱՄՆ ՄԶ գրասենյակի 14 պիլոտային խոշորացված համայնքների աջակցման և Շվեյցարիայի միջազգային համագործակցության գրասենյակի կողմից Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի երեք կլաստերների խոշորացված համայնքների աջակցման Ծրագրերը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. Ծրագրի նպատակը

Հիմնադրամի գործունեության իրականացման համար հիմք են հանդիսանում.

1. Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ ՀՏԶՀ-ի և ՎԶՄԲ-ի միջև 2015 թվականի 15 հունվարի կնքված Ծրագրի համաձայնագիրը,

2., Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ ՀՏԶՀ-ի և ՎԶՄԲ-ի միջև 2015 թվականի 12 նոյեմբերի կնքված Ծրագրի համաձայնագիրը,

3. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրի վերաբերյալ ՀՏԶՀ-ի և ԱՄՆ ՄԶԳ-ի միջև 2015 թվականի 01 օգոստոսի կնքված Փոխըմբռնման հուշագիրը,

4. ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև կնքված ՀՀ սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր իրականացման փաստաթուղթը՝ հաստատված 2015 թվականի 22 սեպտեմբերի:

2.2. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Առաջիկա 7 (յոթ) տարիներում կազմակերպության գործունեության կազմակերպման համար ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև կնքված փոխառության համաձայնագրերով տրամադրվող միջոցները,

2. ՀՀ կառավարության կողմից ծրագրերի իրականացման համար որպես համաֆինանսավորում տրամադրվող միջոցները,

3. ՀՀ համայնքների կողմից ծրագրերի իրականացման համար տրամադրվող ներդրումները,

4. Միջազգային կազմակերպությունների կողմից տրվող դրամաշնորհային միջեցները:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները՝ 7 (յոթ) տարի:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Առաջիկա 7 (յոթ) տարիներում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

1. ***<u>Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման Ծրագիր</u>***

ՍՆՏԶ Ծրագիրն ունի 2 համայնքային բաղադրիչ.

Բաղադրիչ 1 Աջակցություն սոցիալ-տնտեսական զարգացմանը և կարողությունների հզորացմանը տեղական մակարդակում.

Այս բաղադրիչի ներքո հիմնադրամը ներդրումներ կկատարի առանձին համայնքների ենթակառուցվածքների զարգացման մեջ, իրականացնելով շուրջ 120 միկրոծրագրեր:

Բաղադրիչ 1-ի միկրոծրագրերի տեսականին հետևյալն է.

i. Սոցիալական ենթակառուցվածքների՝ կրթական, առողջապահական, մշակութային, սոցիալական նշանակության, հաստատությունների կառուցում, վերակառուցում, վերանորոգում և գույքի տրամադրում.

ii. Տնտեսական ենթակառուցվածքների՝ խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերի, համայնքային և միջհամայնքային ճանապարհների կառուցում, վերակառուցում, վերանորոգում.

iii. Սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքների՝ կոյուղու ցանցերի, հեղեղատարների, հանգստի գոտիների բարեկարգում, վերանորոգում:

Բաղադրիչ 2 Աջակցություն միջհամայնքային սոցիալական և տնտեսական զարգացման նախաձեռնություններին

Այս բաղադրիչը միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացման նորարարական նախաձեռնությունների ֆինանսավորման շնորհիվ ուղղակիորեն կօժանդակի տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների նվազեցման և ներդաշնակ տարածքային զարգացման խթանման 2012-2015թթ. Հայաստանի զարգացման ռազմավարությանը: Բաղադրիչ 2-ով իրականացվում են ենթածրագրեր, ներկայացված տվյալ տարածքի (խոշորացող համայնքների, միջհամայնքային միությունների և համայնքների խմբերի) կողմից կիրականացվեն մոտ 30 ենթածրագրեր: Ի լրումն միկրոծրագրերի տեսականիի, ենթածրագրերը կարող են ընդգրկել նաև՝ տեղական նշանակության բիզնես ծրագրեր, գյուղմթերքի պահպանում և վերամշակում, նոր տեխնոլոգիաների վրա հիմնված այգիներ, տնկարաններ, ջերմոցներ, կաթի հավաքման կետեր և վերամշակման արտադրամասեր, տարածաշրջանային աշխատանքային շուկաների զարգացման ծրագրեր, մասնագիտական վերապատրաստման և հմտությունների կենտրոններ, բիզնես-ինկուբատորներ և այլն:

Ենթածրագրերի բաղադրիչները պետք է լինեն փոխկապակցված, միմյանց ուժեղացնող, միտված մեկ ընդհանուր նպատակի և նպաստեն տարածքի զարգացմանը, ներգրավելով տարածքում գործող ՀԿ-ների, ՁԼՄ-ների, մասնավոր հատվածը և այլ շահագրգիռ կողմերի:

Հիմնադրամի միջոցները կուղղվեն միայն հանրօգուտ, կայուն հանրային ներդրում հանդիսացող ենթածրագրերը: Ոչ մի մասնավոր բիզնես չի ֆինանսավորվի, ոչ մի ներդրում չի արվի այն ենթակառուցվածքի մեջ, որը ապագայում կարող է մասնավորեցվել:

2. Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման Ծրագիր

ՏՏԵԶ Ծրագրի նպատակն է բարելավել ենթակառուցվածքային ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները՝ Հայաստանի ընտրված տարածաշրջաններում տեղական տնտեսության մեջ զբոսաշրջային ոլորտից ստացվող աջակցության ավելացման համար:

Ենթադրվում է, որ Ծրագրի իրականացմամբ Կոտայքի, Լոռվա, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում բնակիչներին և զբոսաշրջիկներին հասանելի կլինեն որակյալ հանրային ենթակառուցվածքներ, տարածաշրջանում կավելանա մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, իսկ վերականգնված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում՝ փոքր և միկրո ձեռնարկությունների քանակը:

Ծրագիրն ունի հետևյալ բաղադրիչներ.

Բաղադրիչ 1: Մշակութային ժառանգության կենտրոնների վերածնում և զբոսաշրջության երթուղիների զարգացում.

Ժառանգության կենտրոնների վերածնում. Այս ենթաբաղադրիչի նպատակը Գորիսում և Մեղրիում, Արենիում, Տաթևում և Տանձատափում հասարակական ենթակառուցվածքները, շինությունների ճակատամասերը, տանիքները, հանրային տարածքների, թանգարանների, փողոցների, ջրամատակարարումն ու փողոցային լուսավորությունը վերականգնելն է, այդ բնակավայրերը վերածելով զբոսաշրջային ուղղության բարձրորակ կենտրոնների:

Զբոսաշրջության երթուղիների զարգացում. Այս ենթաբաղադրիչի նպատակը Հայաստանում գլխավոր զբոսաշրջային երթուղիների երկայնքով գտնվող առավել գրավիչ մշակութային և բնական ժառանգության վայրերի պահպանումը և կառավարման բարելավումը միասնական մոտեցմամբ ֆինանսավորելն է: Ընտրվել են հետևյալ վայրերը. Գառնին (տաճարը և կիրճը), Գեղարդի վանքը, Խոր Վիրապ վանքը, Արենիի շուկան և քարանձավը, Մոզրովի քարանձավը, Եղեգիսը, Ձորաց Քարերը (Քարահունջ), Խնձորեսկը, Հաղպատը և Սանահինը: Ներգրավված վայրերում ենթադրվում է կառավարման պլանների նախապատրաստում, այցելուների համար նախատեսված շինությունների կառուցում, մշակութային ժառանգության հուշարձանների, թանգարանների և հարակից տների պահպանում, ինչպես նաև հարակից փողոցների և հասարակական ենթակառուցվածքների մատչելիության բարելավում:

Հանրային ենթակառուցվածքների տրամադրում մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով. Այս ենթաբաղադրիչի նպատակն է աջակցել Ծրագրի վայրում ընտրված մի շարք՝ զբոսաշրջության մեջ կամ ագրոբիզնեսում ներդրումներ կատարելու պատրաստ մասնավոր հատվածի անձանց, կոմպլեմենտար հանրային ենթակառուցվածք ներդնելու միջոցով:

Բաղադրիչ 2: Ինստիտուցիոնալ զարգացում

Այս բաղադրիչով կբարձրացվի Հայաստանի Զարգացման հիմնադրամի (ՀԶՀ), Պատմական և մշակութային ժառանգության պաշտպանության գործակալության (ՊՄԺՊԳ), ՀՏԶՀ-ի և տեղական ու տարածաշրջանային այլ կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունները և կատարողականությունը"

3. անվտանգության մակարդակի բարձրացման Ծրագիր

ՍԱՄԲ Ծրագիրն իրականացվում է Ասիական բանկի աջակցությամբ: Այս ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության "Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության" նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Հիմնական ակնկալվող արդյունքները նկարագրված են ստորև.

i. Դպրոցական շենքերի սեյսմակայունության մակարդակի բարձրացում. նախատեսվում է կառավարության առաջնահերթության ցանկում ընդգրկված առնվազն 46 դպրոցների շենքերi սեյսմակայունությունը բարձրացնել կամ վերակառուցել՝ նորացված շինարարական նորմերին և դպրոցական շենքերի արդիականացման ուղեցույցներին համապատասխան.

ii. Սեյսմիկ աղետին դիմակայելու պատրաստվածության և պատասխան միջոցներ ձեռնարկելու կարողությունների զարգացում. ՍԱԲԾ-ի շրջանակներում ընդգրկված յուրաքանչյուր դպրոցական շենքի համար նախատեսվում է մշակել Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման միջոցառումների պլան, աշակերտների և ուսուցիչների՝ սեյսմիկ ռիսկերի վերաբերյալ իրազեկության մակարդակն էլ ավելի բարձրացնելու և երկրաշարժի ժամանակ ճիշտ քայլեր ձեռնարկելու և տարհանման վերաբերյալ ուղեցույցներ տալու նպատակով:

Ծրագրի շրջանակներում կտրամադրվեն 15 սեյսմիկ դիտակայանների վերազինման համար անհրաժեշտ սարքավորումներ, և առնվազն 45 աշխատակից կանցնի վերապատրաստում:

iii. Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարմանը և նվազեցմանն ուղղված քաղաքականության համակարգերի կատարելագործում. Ծրագրով նախատեսվում է նպաստել դպրոցների շինարարական նորմերի վերանայմանը և նորացմանը, և մշակել սեյսմիկ անվտանգության բարելավման և հանրային ենթակառուցվածքի կառավարման ֆինանսավորման ռազմավարություն:

iv. սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կարողությունների զարգացում. Ծրագրի արդյունավետ իրականացման համար ՍԱԲԾ-ն կնպաստի Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կարողությունների զարգացմանը:

4. *ԱՄՆ ՄԶԳ-ի և ՇՀԳ-ի Ծրագրեր*

ԱՄՆ ՄԶԳ և Շվեյցարիայի միջազգային համագործակցության գրասենյակի կողմից ֆինանսավորվող Ծրագրերի շրջանակներում ընդգրկվելու են ՍՆՏԶ Ծրագրի 2-րդ բաղադրիչով նախատեսված ենթածրագրեր:

Երկու դոնորներն էլ շահագրգռված են աջակցել միջհամայնքային նախաձեռնություններին՝ ի նպաստ Հայաստանում տարածքային բարեփոխումների, և ողջունում են ՀՏԶՀ-ի ներգրավվածությունը միջհամայնքային հանրային ծառայությունների և տնտեսական զարգացման ծրագրերի պլանավորման և իրագործման մեջ:

Այս համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջհամայնքային կլաստերներն արդեն իսկ ձևավորված են, համայնքների միջև միջհամայնքային ծրագրերի մրցակցություն ընտրություն չի տեղի ունենա: Ընտրությունը վերաբերելու է բուն միջհամայնքային ծրագրերին՝ արդեն իսկ սահմանված համայնքներում:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Գործարար ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը կիրագործի **2.1.** կետում նշված փաստաթղթերով՝ որպես ծրագրերն իրականացնող գործակալություն իր վրա դրված գործառույթների և 2.4. կետում նշված միջոցառումները:

ՀՏԶՀ գործադիր տնօրեն՝

Ա. Կիրակոսյան